

Պետական ծրագրի շրջանակներում ուսումնառության վարկերի տրամադրման պայմաններ		
Հիմնական պայմաններ		
1	Վարկի նպատակ	ՀՀ պետական կամ ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր ունեցող ոչ պետական ԲՈՒՀ-երի՝ վճարովի համակարգի բակալավրի (անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի), մագիստրոսի և կլինիկական օրդինատորի կրթական ծրագրերով ուսումնառող ուսանողների ուսման վարձի ամբողջական կամ մասնակի վճարում
2	Վարկառու	ԲՈՒՀ-երի՝ վճարովի համակարգի բակալավրի, մագիստրատուրայի, ինչպես նաև կլինիկական օրդինատուրայի ՀՀ քաղաքացի հանդիսացող ուսանողներ, բացառությամբ ԱՀ-ի տարածքում հաշվառված/բնակվող և/կամ ԱՀ-ում անձնագիր ստացած ԲՈՒՀ-երի ուսանողների
3	Վարկի արժույթ	ՀՀ դրամ
4	Տարեկան տոկոսադրույք	9%, որից պետության կողմից սուբսիդավորվելու է տոկոսադրույքի 2 տոկոսային կետին համարժեք մասը՝ բոլոր ուսանողների համար, տոկոսադրույքի 3 տոկոսային կետին համարժեք մասը՝ նախորդ ուսումնական տարվա ընթացքում գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողների համար
5	Վարկի առավելագույն ժամկետ	ուսումնառության ժամկետ գումարած 6 տարի, սակայն ոչ ավել, քան 10 տարի
6	Վարկի նվազագույն ժամկետ	ուսումնառության ժամկետ գումարած 6 ամիս
7	Վարկի տրամադրման եղանակ	վարկը տրամադրվում է ուսումնառության ամբողջ ընթացքում առավելագույնը 5 մասնաբաժնով (յուրաքանչյուր ուսումնական տարվա համար մեկ մասնաբաժին), անկանխիկ եղանակով՝ ԲՈՒՀ-ի հաշվին փոխանցելու միջոցով
8	Վարկի յուրաքանչյուր մասնաբաժնի առավելագույն գումար	1 ուսումնական տարվա վարձի չափով, բայց ոչ ավել, քան 800,000 ՀՀ դրամ
9	ուսումնառության ողջ ընթացքում տրամադրված վարկերի հանրագումար (առավելագույն գումար)	4,000,000 ՀՀ դրամ
10	Վարկի և տոկոսագումարի մարումներ	1. տոկոսագումարի 1-ին մարման ամսաթիվ՝ վարկային պայմանագրի կնքման ամսվանը հաջորդող 2-րդ ամսվա նույն օրը, այնուհետև՝ ամսական, ուսումնառության ամբողջ ընթացքում, սակայն ոչ ավել քան 5 տարի, 2. 1-ին կետում նշված ժամկետի ավարտից հետո վարկը և տոկոսագումարները մարվում են ամսական հավասարաչափ մասերով (անուփստետային)
11	Վարկի տրամադրման/սպասարկման վճար	չի սահմանվում
12	Բանկային հաշվի բացում, սպասարկում	անվճար
13	Բանկային հաշվի նվազագույն մնացորդ	չի սահմանվում
14	Ապահովություն	ուսանողի ծնողի/խնամակալի կամ այլ անձի երաշխավորություն
15	Վարկառուին և երաշխավորին ներկայացվող պահանջներ	Ներկայացված է հավելված 1.2-ում
16	Տույժեր, տուգանքներ	Ներկայացված է հավելված 1.3-ում
17	Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում	Ներկայացված է հավելված 1.1-ում
18	Հայտի և փաստաթղթերի ընդունման վայր	Բանկի բոլոր մասնաճյուղեր

Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում		
1	Դրական որոշման և վարկի մերժման գործոններ	Դրական որոշման գործոններ - Որոշման կայացման օրվա դրությամբ վարկառուի և երաշխավորի ժամկետանց և/կամ ստանդարտից բարձր դաս ունեցող պարտավորությունների բացակայություն, այդ՝ թվում երաշխավորություններ, և վարկարժանության դրական գնահատական:
		Մերժման գործոններ - որոշման կայացման օրվա դրությամբ վարկառուի և երաշխավորի ժամկետանց, ստանդարտից բարձր դաս ունեցող պարտավորությունների՝ այդ թվում երաշխավորությունների առկայություն, -վարկարժանության բացասական գնահատական, -ծրագրի շրջանակներում ստացած՝ ծրագրի վերաֆինանսավորող ընկերության կողմից ոչ որակավորված ճանաչված վարկի առկայություն
2	Որոշման կայացման և վարկի տրամադրման ժամկետ	2 աշխատանքային օր

Վարկառուին/երաշխավորին ներկայացվող պահանջներ		
1	Վարկառու	ԲՈՒՀ-երի՝ վճարովի համակարգի բակալավրի, մագիստրատուրայի, ինչպես նաև կլինիկական օրդինատուրայի ՀՀ քաղաքացի հանդիսացող ուսանողներ, բացառությամբ ԱՀ-ի տարածքում հաշվառված/բնակվող և/կամ ԱՀ-ում անձնագիր ստացած ԲՈՒՀ-երի ուսանողների
2	Երաշխավոր	Վարկառուի ծնողը/խնամակալը կամ այլ անձ, ում տարիքը մինչև վարկի մարումը չի գերազանցում կենսաթոշակային տարիքը
3	Վարկառուի և երաշխավորի վարկային պատմությանը ներկայացվող պահանջ (վարկի առաջին և յուրաքանչյուր հաջորդ փուլի տրամադրման դեպքում)	1.Որոշման կայացման օրվա դրությամբ ժամկետանց և/կամ ստանդարտից բարձր դաս ունեցող պարտավորության՝ այդ թվում երաշխավորության բացակայություն, Բանկի ներքին գնահատում
4	Վարկառուի և երաշխավորի վարկարժանության գնահատում	Համաձայն Բանկի ներքին գնահատման
5	Վարկառուին և երաշխավորին ներկայացվող այլ պահանջներ	1.Վարկառու չեն կարող դառնալ այն ուսանողները, որոնց՝ սույն ծրագրի շրջանակներում նախկինում տրամադրված վարկը վերաֆինանսավորող ընկերության կողմից ճանաչվել է ոչ որակավորված 2.Բջջային հեռախոսահամարի և էլ. Փոստի հասցեի առկայություն

Տոյժեր, Տուգանքներ		
1	Ժամկետանց տոկոսագումարի գծով տարեկան տոկոս	48%
2	Ժամկետանց վարկի գումարի գծով տարեկան տոկոս	24%
3	վարկի գումարի անբողջությամբ կամ մասնակի վաղաժամկետ մարման դեպքում	չի սահմանվում